ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԿԻՑ ՊԱՐՏԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի բազմահարուստ պատմությունը, որը անխզելիորեն կապված է նրա մեծ կազմակերպչի ու առաջնորդի՝ Վ. Ի. Լենինի անվան հետ, մարքսիզմ-լենինիզմն է գործողության մեջ։ Կոմունիստական պարտիան իր զարգացման բոլոր էտապներում խոշոր ուշադրություն է նվիրել ՍՄԿՊ պատմության դիտական մշակմանն ու ուսումնասիրությանը, աշխատանքի ու պայքարի սխրանքներով լի իր գործունեության լուսաբանմանը։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո, Սովետական իշխանության առաջին իսկ տարիներին, ՍՄԿՊ պատմությունը ճանաչում գտավ, որպես հասարակական գիտության կարևորագույն բնագավառներից մեկը, որպես պատմական գիտություն։ Մեր երկրում տասնյակ հարյուրավոր աշխատություններ են հրատարակվել Կոմունիստական պարտիայի պատմության հարցերին նվիրված։ Հատկապես ուշադրավ է վերջերս լույս տեսած «Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմության» ձեռնարկը։

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի պատմության դիտական մշակման գործում իր որոշակի տեղն ունի ՍՍՌՄ եղբայրական ռեսպուբլիկաների կոմպարտիաների պատմության հարցերի լուսաբանումը։

Լենինյան պարտիայի հենագույն ջոկատներից մեկի՝ Հայաստանի Կոմպարտիայի պատմության հարցերի լուսաբանումն սկսվել է վաղուց։ Առաջին քայլը դա Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին անլեգալ կոնֆերանսի որոշումների առանձին բրոշյուրով հրատարակումն էր (1920 թ. հոկտեմբեր, Բաքու) և պարտիական արխիվի հիմնադրումը (1920 թ. դեկտեմբեր)։

40 տարի առաջ, 1920 թվականի հունվարին, Երևան քաղաքում գումարված Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների անլեգալ կոնֆերանսը կարևոր իրադարձություն է Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության մեջ։ Կոնֆերանսը, որին մասնակցում էին Հայաստանի գրեթե բոլոր շրջանների պարտիական կազմակերպությունների ներկայացուցիչները, քննարկեց մի շարք կարևորագույն հարցեր, այդ թվում՝ քաղաքական դրության, պարտիական կազմակերպությունների կառուցվածքի, լեգալ կազմակերպություններում աշխատանքի ծրագիրը, ընթացիկ մոմենտի և այլն, ընտրեց ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի (Армеком) նոր կազմ, վճռական հակահարված տվեց Հայաստանի Կոմպարտիայի լիակատար կազմակերպական մեկուսացման կողմնակիցներին։

Հունվարյան կոնֆերանսի պատմական նշանակությունը ամենից առաջ այն է, որ նա Հայաստանի Կոմունիստական պարտիայի փաստական կազմակերպական ձևավորման սկիզբը դրեց։ Կոնֆերանսի որոշումները տոգորված էին ՌԿ(բ)Պ հետ Հայաստանի Կոմունիստական կազմակերպությունների միասնության և անխզելի կապի ոգով, Կոմունիստական պարտիայի կազմակերպական անխախտ սկզբունքների ոգով։ Հունվարյան կոնֆերանսը վճռական նշանակություն ունեցավ Հայաստանի պարտիական կազմակերպությունների գործունեության հետագա ուժեղացման, հայ աշխատավորության պայքարը գլխավորելու գործում։ «Դա Հայաստանի առաջին կոնֆերանսն էր,— ասված է 1920 թ. լույս տեսած այն բրոշյուրի առաջաբանում, ուր զետեղված է կոնֆերանսի որոշումը,— որը գրեց կազմակերպված պարտիայի սկիզբը։

Տեղերում պարտիական կազմակերպություններ հիմնելու երկարատև, համառ աշխատանքն ավարտվեց կոնֆերանսով, որտեղ ներկայացված էին բոլոր շրջանները՝ Երևանը, Ալեքսանդրոպոլը, Սարիղամիշը, Ղարսը, Նոր Բայազետը, Ղազախ-Շամշադինը, Դիլիջանը, «Զեղոք գոտին»։

Հայաստանում արագորեն և օբյեկտիվորեն աճող ռևոլյուցիան կարիք էր զգում ոչ միայն ի մի հավաքել և կազմակերպել ցաքուցրիվ ռևոլյուցիոն ուժերը, այլև ունենալ միասնական

և Ճիշտ տակտիկա» (տե՛ս ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, քաղվածքների ֆոնդ)։

Այսպիսով, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների 1920 թ. հունվարյան կոնֆերանսով փաստորեն ավարտվում է Հայաստանի տերիտորիայի վրա մինչև այդ անջատ-անջատ գործող բոլշևիկյան կազմակերպությունների միավորումը ՌԿ(բ)Պ Հայաստանի Կոմիտեի ղեկավարության ներքո։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության հարցերի լուսաբանման ճանապարհին ուշագրավ են ՀԿՊ առաջին համագումարի նախօրյակին 1922 թ. հունվարին հրատարակված «ՀԿ(բ)Պ Կենտկոմի «Տեղեկագրի» նյութերը, այդ թվում՝ Ա. Ֆ. Մյասնիկյանի «Հայաստանի Կոմունիստական պարտիայի նշանակությունը» խորագրով հոդվածը։ Խոսելով հունվարյան կոնֆերանսի նշանակության մասին, Ա. Ֆ. Մյասնիկյանը միաժամանակ ցույց է տալիս, որ Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակից հետո Կոմպարտիան գլխավորել է աշխատավոր մասսաների պայքարը, նրանց հաղթանակի տարել քաղաքացիական կռիվների միջով և բոլոր պայմանները ստեղծել երկրի սոցիալիստական վերածննդի համար։

1923 թվականի մարտի 13-ին ՀԿՊ Կենտկոմը որոշում է ստեղծել Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմին կից Պարտիայի պատմության ինստիտուտ (Կուսպատ), նրա վրա դնելով Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների և կոմունիստական կազմակերպությունների պատմության հարցերի ուսումնասիրությունն ու լուսաբանումը։ Շարունակելով նախառևոլյուցիոն բոլշևիկյան հայ պարբերական մամուլի և մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների հրատարակության ասպարեզում մինչև այդ ստեղծված լավագույն արագիցիաները, ՀԿ(բ)Պ Կենտկոմին կից Պարտիայի պատմության ինստիտուտը իրականացնում է Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի և Կոմունիստական պարտիայի ու Սովետական պետության ականավոր գործիչների շատ աշխատությունների հայերեն թարգմանությունը և հրատարակությունը։ Կուսպատը շոշափելի աշխատանք է կատարում նաև Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների և կոմունիստական կազմակերպությունների պատմության հարցերի հետազոտման ուղղությամբ։ Մինչև 40-ական թվականները հրատարակվում են Ս. Ս. Սպանդարյանի «Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր» ժողովածուն (1939), 1920 թ. Մայիսյան ապստամբությանը և «Սպարտակ» երիտասարդական կազմակերպության գործունեությանը նվիրված փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ։ Հրատարակվում են նաև մի քանի ինքնուրույն բրոշյուրներ և հին բոլշևիկների հիշողություններ։

«Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր» ժողովածուի հրատարակությամբ Կուսպատը հիմք է դնում լավագույն լենինյաններից մեկի՝ Ս. Ս. Սպանդարյանի գրական ժառանգության հավաքման և այն հայ աշխատավորական լայն մասսաներին ծանոթացնելու շնորհակալ գործին։

Փաստական հարուստ նյութ է պարունակում «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը)» ժողովածուն։ Վերոհիշյալ ժողովածուն ըստ էության Հայաստանի Կոմպարտիայի գլխավորությամբ աշխատավոր մասսաների մղած պայքարը արտացոլող փաստաթղթերի և նյութերի առաջին լուրջ ժողովածուն էր, որը գրական կեր խաղաց ինչպես աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործում, այնպես էլ պատմա-ռևոլյուցիոն գրականության մեջ։

1936 թ. փետրվարի 29-ին Հայաստանի ԿՊ Կենտկոմն ընդունում է «Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների և բոլշևիկյան կազմակերպությունների պատմություն ստեղծելու մասին» որոշումը, որից հետո որոշ աշխատանք է կատարվում արխիվային անհրաժեշտ նյութեր հավաքելու ուղղությամբ։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Կուսպատը դադարում է գործելուց։

Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների և կոմունիստական կազմակերպությունների պատմության ուսումնասիրման ու մշակման գործում կարևոր կեր է պատկանում Հայաստանի ԿՊ Կենտկոմին կից Պարտիայի պատմության ինստիտուտին—ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալին, որն ստեղծվել է 1947 թ. հոկտեմբերին։ Հայաստանի ԿՊ Կենտկոմին կից Պարտիայի պատմության ինստիտուտը ռևոլյուցիայի գիտահետազոտական կարևոր օջախներից է։ ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալ ստեղծելու վերաբերյալ ՀԿՊ Կենտկոմի 1947 թ. սեպտեմբերի 23-ի որոշման մեջ ասված է.

«1. Հայաստանում իդեոլոգիական աշխատանքն ուժեղացնելու նպատակով անհրաժեշտ համարել Հայաստանի ԿՊ Կենտկոմին կից կազմակերպել Մ.Լ.Ի-ի Հայկական ֆիլիալ։

Մ.Լ.Ի-ի Հայկական ֆիլիալի առջև ծառացած խնդիրները կատարելու համար նրա կազմում ստեղծել երկու սեկտոր՝

ա) Հայաստանի Կոմպարտիայի պատմության սկզբից, այնպես կենտրոնացնելով Հայաստանի Կ(բ)Պ պատմության նախապատրաստումն ու լույս ընծայումը, Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների ուսումնասիրությունը, Հայաստանի ականավոր բոլշևիկների գրական ժառանգության հավաքումը, մշակումն ու հրատարակումը և գիտա-հետազոտական աշխատանքը։

բ) Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների հրատարակության սկզբից, այնպես կենտրոնացնելով մարքսիզմ-լենինիզմի կլասիկների բոլոր աշխատությունների թարգմանությունը, խմբագրումն ու հրատարակումը»։

Այդ որոշմանը համապատասխան անցած տարիների ընթացքում ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալը նախապատրաստել և հայերեն լեզվով հրատարակել է մարքսիզմ-լենինիզմի կլասիկների բազմաթիվ աշխատությունները, այդ թվում՝ Կ. Մարքսի «Կապիտալը» (1, 2 և 3 հատորները), «Վարձու աշխատանք և կապիտալը», Ֆ. Էնգելսի «Բնության դիալեկտիկան», «Անտի Դյուրինգը», «Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը», «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը», ինչպես նաև «Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ», «Նամակներ «Կապիտալ»-ի մասին», «Անգլիայի մասին» և այլն։

Հայկական ֆիլիալն իրականացրել է Վ. Ի. Լենինի երկերի (4-րդ հրատարակություն) 37 հատորների, ինչպես նաև նրա աշխատությունների առանձին թեմատիկ ժողովածուների թարգմանությունն ու հրատարակումը։

Հայերեն լեզվով հրատարակվել են նաև «ՍՄԿՊ-ն բանաձևերում...» (3 մասով), «Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին» (2 գրքով), արտադրության է հանձնված Վ. Ի. Լենինի երկերի 38-րդ հատորը և Վ. Ի. Լենինի երկերի չորրորդ հրատարակության տեղեկատու հատորի 2-րդ մասը։ 1920—1959 թթ. հայերեն հրատարակվել են Վ. Ի. Լենինի աշխատությունները 321 գրքով, մոտ 2 միլիոն օրինակ ընդհանուր տիրաժով։ Միայն 1953—1959 թթ. հայերեն լեզվով հրատարակվել է Վ. Ի. Լենինի 49 անուն աշխատություն՝ 330 հազար օրինակ ընդհանուր տիրաժով։ Այս բոլորը հնարավորություն է տալիս ձեռնամուխ լինելու Վ. Ի. Լենինի երկերի լիակատար ժողովածուի հրատարակությանը (55 հատորով)։

Վ. Ի. Լենինի աշխատությունները վաղուց դարձել են հայ ընթերցողի սեղանի գիրքը։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների, պարտիական կարևորագույն փաստաթղթերի հայերեն թարգմանության գործում շնորհակալ աշխատանք է կատարում ինստիտուտի թարգմանությունների սեկտորը (վարիչ Վ. Ղազանչյան), որի շուրջը համախմբված են ռեսպուբլիկայի բարձրորակ թարգմանիչները։ Առանձնապես հիշատակության արժանի է Հ. Ասլանյանի, Տ. Դաղյանի, Վ. Ավագյանի, Ռ. Գուլբանյանի, Ա. Բզնունու, Վ. Փոթեյանի, Հ. Թուրշյանի, Կ. Վարդանյանի կատարած աշխատանքը։

Վերջին տարիներս Հայկական ֆիլիալն աշխատել է Հայաստանի Կոմունիստական պարտիայի գիտական պատմության ստեղծման վրա։ Այդ աշխատանքն ընթացել է փաստաթղթերի ժողովածուներ ստեղծելու, Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչների աշխատությունները հրատարակելու, Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների և Կոմունիստական պարտիայի պատմությանը նվիրված մենագրություններ ու բրոշյուրներ ստեղծելու ուղղությամբ։ Ինստիտուտը մեծ աշխատանք է կատարել Սովետական Միության Կոմպարտիայի ականավոր գործիչների, հայ ժողովրդի փառապանծ զավակների գրական ժառանգությունը հավաքելու և հրատարակելու գործում։ Հրատարակվել են Ս. Գ. Շահումյանի Ընտիր երկերը (1948), «Հոդվածներ և ճառեր» ժողովածուն (1953), երկերը երեք հատորով (1955—1958), Շահումյանի նամակների ժողովածուն (1959), Ս. Ս. Սպանդարյանի երկերը երկու հատորով (1959), Ա. Ֆ. Մյասնիկյանի, Բ. Մ. Կնունյանցի Ընտիր երկերը (1957, 1958)։ Հայկական ֆիլիալը մասնակցել է Ս. Գ. Շահումյանի Ընտիր երկերի ռուսերեն հրատարակության նախապատրաստմանը, որոնք լույս են տեսել 1957—1958 թթ. Մոսկվայում, երկու հատորով՝ 50 հազարական օրինակ տիրաժով։ Այդ աշխատությունները արժեքավոր նյութ են պարունակում Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումների և բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության մասին, օգնում են պատմաբաններին՝ ճիշտ լուսաբանելու Անդրկովկասի բոլշևիկների հերոսական պայքարի պատմությունը։

Փաստական հարուստ նյութ են պարունակում «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.», «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» ժողովա-

ծները, որոնք հրատարակվել են 1955 և 1957 թվականներին առանձին լեզվով Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի և Հայկական ՍՍՌ ՆԳՄ Արխիվային վարչության մասնակցությամբ։ Վերոհիշյալ ժողովածուները պատում են այն հերոսական պայքարի մասին, որ Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ մղել են Հայաստանի աշխատավորները հանուն Մեծ Հոկտեմբերի գաղափարների հաղթանակի, հանուն երկրամասում Սովետական իշխանության հաստատման։

Այդ ամենի շնորհիվ գիտական շրջանառության մեջ մտան բազմաթիվ փաստական տվյալներ և պարտիական-պատմական փաստաթղթեր, որոնց օգնությամբ ռեսպուբլիկայի պատմաբանները կարողացան լուծել Հայաստանի Կոմպարտիայի պատմության մի շարք կարևոր հարցեր։ Դրա շնորհիվ աճեց ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի գիտական արտադրանքի տեսակարար կշիռը սովետահայ պատմագրության մեջ, լուրջ քայլ կատարվեց այն սխալներն ուղղելու գործում, որ տեղ էին գտել ՍՄԿՊ XX Համագումարին նախորդող ժամանակաշրջանի պատմագիտական աշխատություններում։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հանձնարարությամբ Հայաստանի Կենտկոմին կից Պարտիայի պատմության ինստիտուտը հեղինակային կոլեկտիվի հետ միասին նախապատրաստեց և 1958 թվականի փետրվարին հայերեն լեզվով հրատարակեց «Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր» աշխատությունը, որը ընդգրկում է Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացման պատմությունը XIX դարի վերջերից սկսած, այնուհետև բոլշևիկյան կազմակերպությունների պատմությունը նրանց ձևավորումից մինչև 1920 թվականը և ապա Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմությունը 1920 թվականից՝ նրա ձևավորումից մինչև 1957 թվականի վերջերը։ Հայաստանի ԿՊ Կենտկոմը Հայկական ֆիլիալի և հեղինակային կոլեկտիվի առջև խնդիր էր դրել ստեղծել ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների գիտական պատմությունը, օգնել պրոպագանդիստներին և պարտիայի բոլոր անդամներին Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության ուսումնասիրման գործում։ Պարզ է, որ տեղական պարտիական կազմակերպությունների պատմությանը նվիրված «Ուրվագծերը» ուսումնական ձեռնարկ չէ։ «Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր» աշխատության երևան գալը աչքի ընկնող երևույթ էր ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների կյանքում։ Ֆիլիալն ու հեղինակային կոլեկտիվը որոշակի աշխատանք են կատարել ՀԿՊ պատմությունը և ռեոլյուցիոն շարժումները արտացոլող փաստական նյութերի հետազոտման և սիստեմավորման ուղղությամբ։ «Ուրվագծերում» Հայաստանի Կոմպարտիայի պատմությունը շարադրված է ՍՄԿՊ պատմության հետ սերտորեն շաղկապված, ցույց է տրված Հայաստանի պարտիական կազմակերպությունների գործունեության անխզելի կապը սոցիալիստական ռեոլյուցիայի հաղթանակի և սոցիալիզմի կառուցման համար Սովետական Միության Կոմպարտիայի մղած ընդհանուր պայքարի հետ։

Ինքնին հասկանալի է, որ «Ուրվագծերի» ստեղծումը մի քայլ էր Հայաստանի Կոմպարտիայի պատմության մշակման ճանապարհին։ Բայց ինչպես Հայաստանի ԿՊ Կենտկոմում, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալում, Երևանի Պետական համալսարանում և ռեսպուբլիկայի այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում կազմակերպված քննարկումները ցույց տվեցին, «Ուրվագծերը» գրված են տեսական-գաղափարական ցածր մակարդակով, պարունակում են լուրջ սխալներ և ամբողջովին վերցրած հետու են պատմա-ռեոլյուցիոն գրականությանը ներկայացվող, ինչպես նաև ընթերցողների աճած պահանջները բավարարելուց։ «Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության «Ուրվագծերը» թերի մշակման և թույլ տրված սխալների պատճառով Հայաստանի Կոմպարտիայի պատմության վերաբերյալ իսկական գիտական աշխատության նշանակություն չբստացան։

Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմը, հաշվի առնելով այդ ամենը, Հայկական ֆիլիալի առջև խնդիր դրեց առաջիկա երկու-երեք տարիների ընթացքում ստեղծել գիտական լիարժեք աշխատություն Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության վերաբերյալ։ Ղեկավարվելով ՀԿՊ Կենտկոմի ցուցումներով, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալը մշակել է Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության նոր «Ուրվագծեր» ստեղծելու համար գործնական միջոցառումներ, որոնք արժանացել են ՀԿՊ Կենտկոմի և ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հավանությանը։ Ուժեղացվել է հեղինակային կոլեկտիվը ի հաշիվ ռեսպուբլիկայի բարձրորակ պատմաբանների, փիլիսոփաների, տնտեսագետների, իրավաբանների։ Ֆիլիալը հեղինակային նոր կոլեկտիվի հետ միասին մշակել է «Ուրվագծերի» սխեման, ճշտել Հայաս-

տանի Կոմպարտիայի պատմության պարբերացման և այլ հարցեր։ Ներկայումս Լենինգրադն աշխատանք է ծավալվում ինչպես արխիվային նոր նյութերի հետազոտման, այնպես էլ «Ուրվագծերի» շարադրման ուղղությամբ։ Նախատեսված է Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների և Կոմունիստական պարտիայի պատմության չլուծված պրոբլեմները քննարկել Գիտական խորհրդի նիստերում՝ գիտական հասարակության մասնակցությամբ, իսկ առանձին հարցեր կոորդինացնել Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆիլիալների միջև։

Ինչպես հայտնի է, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունը, Անդրկովկասի պրոլետարիատի նման իր կազմով ինտերնացիոնալ լինելով, մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Անդրկովկասի տերիտորիայում Սովետական իշխանության հաստատումը, մի միասնական կազմակերպություն էր և երկրամասում չկային կազմակերպական տեսակետից ձևավորված Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի առանձին կոմունիստական պարտիաներ։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպություններին այդ շրջանում ղեկավարում էին ամբողջ երկրամասի համար միասնական պարտիական կենտրոնները՝ ՌՍԴՐՊ Կովկասյան Մթությենական Կոմիտեն, այնուհետև ՌԿ(բ)Պ Կովկասյան երկրային Կոմիտեն և ապա ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոն։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունը ամբողջ երկրամասի բազմազգ պրոլետարիատի ռևոլյուցիոն ինտերնացիոնալ տրադիցիաների լավագույն կրողն է։ Վ. Ի. Լենինը գրանում էր այդ տրադիցիաներով և գրանց որպես օրինակ էր բերում։ «Բանվորական շարժման շահերին ու խնդիրներին համապատասխանում է բոլոր ազգերի բանվորների միայն այն լիակատար միասնությունը (տեղերում, վարից մինչև վեր), որ այնքան երկար ու այնքան հաջող իրագործվում էր Կովկասում» (Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 19, էջ 58)։

Մինչև Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի առանձին կոմունիստական պարտիաների կազմակերպելը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունը հանդես էր գալիս որպես միասնական մի ամբողջություն և հանդիսանում էր Սովետական Միության Կոմունիստական պարտիայի մարտական ջոկատներից մեկը։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների այդ ժամանակաշրջանի պատմության համատեղ մշակման բացակայությունը հանդեսանում է այն բանին, որ նահանջներ են կատարվում պատմականության սկզբունքից։ Անդրկովկասի պատմաբանների առանձին աշխատություններում հակասական գնահատականներ են տրվում երկրամասի ռևոլյուցիոն շարժման և բոլշևիկյան կազմակերպությունների պատմության մի քանի կարևոր պրոբլեմների վերաբերյալ, ինչպես նաև նկատվում գերագնահատելու պարտիայի առանձին տեղական կոմիտեների և կազմակերպությունների, ռևոլյուցիոն գործիչների մի մասի դերը և թերագնահատելու մյուսինը։

Այդ հակասականությունն ու անհամաձայնեցվածությունը մասնավորապես ի հայտ եկան կոմպարտիաների պատմության «Ուրվագծերում», որոնք հրատարակվել են Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում։ Հետաքրքիր է որպես օրինակ վերցնենք ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի աշխատանքի լուսաբանման հետ կապված հարցերը։ Ինչպես վերոհիշյալ «Ուրվագծերում», այնպես էլ պատմագիտական մյուս աշխատություններում գրեթե չի լուսաբանվել Երկրային կոմիտեի գործունեությունը, այնինչ դա գիտա-քաղաքական խոշոր նշանակություն ունի։ Տվյալ հարցի մշակման ակտուալությունը թելադրվում է այն բանով, որ Սովետական իշխանության համար 1917—1920 թթ. Անդրկովկասի բանվորների և գյուղացիների մղած պայքարի ամբողջ պատմությունը սերտորեն կապված է ՌԿՊ(բ) Կովկասյան Երկրային Կոմիտեի՝ երկրամասի բոլշևիկյան բոլոր կազմակերպությունների ղեկավար օրգանի գործունեության հետ։ Մինչև այժմ մեր պատմական գրականության մեջ անբավարար է լուսաբանված Կովկասի երկրային բոլշևիկյան կազմակերպության համագումարների, կոնֆերանսների և պլենումների պատմական նշանակությունը։

Հակասականություն է նկատվում այնպիսի կարևորագույն հարցերի գնահատման մեջ, ինչպիսիք են՝ 1917—1918 թթ. Անդրկովկասում ռևոլյուցիոն սիտուացիայի առկայության, Անդրկովկասում անկախ սովետական ռեսպուբլիկաներ ստեղծելու հարցերում և այլն։

Մինչև այժմ և ոչ մի աշխատության մեջ քննության չի առնված ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի գործունեությունը Բաքվի հերոսական կոմունայի ժամանակաշրջանում։ Ավելին, գնահատելով այդ ժամանակաշրջանը, որոշ պատմաբաններ նույնիսկ լռության են մատնում ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի գործությունը։ Վատ է լուսաբանվում ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նույնիսկ այն ժամանակաշրջանի գործունեությունը, երբ երկրամասում հաղթանակել էր Սովետական իշխանությունը։

Պատմական գրականության մեջ հստակորեն չի վերլուծվել Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի ինքնուրույն կոմունիստական պարտիաների կազմակերպական ձևավորման հարցը։ Դրությունն ավելի բարդ է, երբ շոշափում ենք ՌԿ(բ)Պ Երկրային Կոմիտեի վերաբերմունքը դեպի «Հումմեթ» և այսպես կոչված «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» խումբը։

Անբավարար է լուսաբանվում ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեի դերը Անդրկովկասի կոմունիստական երիտասարդական կազմակերպությունների ղեկավարման գործում։ Ընդհանրապես, պարտիայի Կովկասյան Երկրային Կոմիտեի՝ որպես երկրամասի բոլոր բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար օրգանի գործունեությունը շարադրվում է հակասական կերպով և թերագնահատվում է, մինչդեռ ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային Կոմիտեն վիթխարի դեր է խաղացել բուրժուական նացիոնալիզմի, Անդրկովկասյան հակառևոլյուցիոն կոմիսարիատի ու սեյմի, Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի նացիոնալիստական կառավարությունների, օտարերկրյա ինտերվենտների դեմ երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների պայքարը գլխավորելու գործում։

Այդ պատճառով մեզ թվում է, որ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության հարցերի համաչափ մշակումը հրատապ անհրաժեշտություն է։

ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆիլիալները պետք է կոորդինացնեն իրենց աշխատանքը լիարժեք գիտական աշխատություններ, կոմպարտիաների պատմության ուրվագծեր ստեղծելու համար, ուրվագծեր, որոնք հիշտ արտացոլեն այն հսկայական աշխատանքը, որ կատարել է Անդրկովկասի միասնական բոլշևիկյան կազմակերպությունը՝ Սովետական իշխանության համար երկրամասի բազմազգ պրոլետարիատի մղած պայքարի ժամանակաշրջանում։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի և ռևոլյուցիոն շարժումների պատմության լուսաբանման նոր «Ուրվագծերի» ստեղծման գործում զգալի դեր ունի կատարելու պարտիական արխիվը, որը պահպանում է 3804 ֆոնդ՝ մոտ 450 հազար արխիվային միավոր փաստաթղթերով։ Բացի պատմա-ռևոլյուցիոն ֆոնդից (ֆ. 33), որը իր ծավալով և բովանդակությամբ ֆիլիալի արխիվի ամենախոշոր ֆոնդերից է, հարուստ և բազմաբովանդակ նյութեր են պարունակում ՀԿՊ Կենտկոմի, ՀԿՊ Կենտրոնական Վերահսկիչ հանձնաժողովի, Հայաստանի բաղկոմ-շրջկոմների ֆոնդերը, Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակիցներ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Կնունյանցի, Ա. Մյասնիկյանի, Ա. Միկոյանի, Հայաստանի ականավոր բոլշևիկներ Ս. Ալավերդյանի Ս. Մուսաելյանի, Բ. Ղարիբջանյանի, Ղ. Ղուկասյանի, Ս. Տեր-Գարրիելյանի, Հովհ. Սարուխանյանի, Բ. Հարությունյանի և տասնյակ այլ ռևոլյուցիոն գործիչների անձնական ֆոնդերը։ Անձնական ֆոնդերից ամենահարուստը Ստ. Շահումյանի ֆոնդն է։ Այնտեղ, բացի Շահումյանի շատ աշխատությունների ձեռագրերից, պահվում են նաև նրա նամակները, աշակերտական տետրակները և այլ նյութեր։

Շահումյանի ֆոնդի նյութերի հիման վրա Հայաստանի պատմաբանները, տնտեսագետները ու գրականագետները գրել են բազմաթիվ մենագրություններ, դիսերտացիաներ և բրոշյուրներ։

675 արխիվային միավոր է պարունակում Ս. Սպանդարյանի ֆոնդը, այդ թվում՝ 115 նամակ, որոնք հասցեագրված են հարազատներին և ընկերներին։ Ֆիլիալի արխիվը տարեցտարի հարստանում է նոր նյութերով, հատկապես երկրի պարտիական-պետական տարբեր արխիվներում հայտնաբերված նյութերի քաղվածքներով։ Մեծ չափով հարստացել են պարտիական-պատմական, ինչպես նաև Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Կնունյանցի, Ս. Տեր-Պետրոսյանի (Կամո), Ա. Ֆ. Մյասնիկյանի, Ս. Կասյանի, Ա. Մռավյանի, Ս. Տեր-Գարրիելյանի և ուրիշների ֆոնդերը։ Ավելացել է պարտիական արխիվի նյութերը ուսումնասիրողների թիվը։ Ներկայումս ավելի շատ գիտնականներ, դիսերտանտներ են օգտվում ֆիլիալի արխիվից. նրանք գիտական շրջանառության մեջ են դնում պատմա-ռևոլյուցիոն նյութերը, Հայաստանի Կոմպարտիայի պատմությունը պատկերող փաստաթղթերը։ Միայն վերջին 10 տարում ՀԿՊ Կենտկոմի ֆոնդի փաստաթղթերի վրա աշխատել են ավելի քան 150 գիտական աշխատողներ, դասախոսներ, ասպիրանտ-դիսերտանտներ։

Այսպիսով, պարտիական արխիվը իր նյութերով փաստական բազա է ծառայում Հայաստանի Կոմպարտիայի պատմության գիտական լուսաբանման համար։ Արխիվի դերը չի սահմանափակվում միայն փաստաթղթերի հայտնաբերմամբ ու մշակմամբ։ Պարտիայի պատմության սեկտորի գիտական աշխատողների հետ միասին արխիվի աշխատողները մասնակցություն են ունենում փաստաթղթերի և նյութերի ժողովածուների հրատարակությանը։

Հայկական ֆիլիալին մեծ օգնություն են ցույց տալիս հին բոլշևիկները և նրանց ընտա-

ների անդամները, պարտիական արխիվին տրամադրելով իրենց մոտ պահպանված փաստաթղթեր ու ընդհատակում ստեղծված արժեքավոր գրքեր և թերթեր։

Հին բոլշևիկ Ա. Մելիքյանի անձնական արխիվից ֆիլիալը մի շարք այլ նյութերի հետ միասին ստացել է Ստ. Շահումյանի 1918 թ. հունվարի 29-ին Մելիքյանին գրած նամակի բնագիրը։ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ականավոր գործիչ Ս. Տեր-Դարբինյանի անձնական արխիվի նյութերի հետ միասին ստացվել են Ս. Մ. Կիրովի, Ս. Կ. Օրջոնիկիձեի մի քանի նամակներ, 1918 թ. մարտի 12—13-ին Ստ. Շահումյանին Ի. Վ. Ստալինի գրած անտիպ նամակի մեքենագիր օրինակը և այլն։

ՌՍԴԲՊ հինգերորդ համագումարի դելեգատ (Երևանի կազմակերպությունից) Գ. Ն. Սոկոլովսկու այրին ֆիլիալին է հանձնել մի շարք նյութեր, այդ թվում՝ հիշողություններ ՌՍԴԲՊ Երևանի կազմակերպության ձևավորման մասին և 1907 թ. Երևանում լույս տեսած սոցիալ-դեմոկրատական «Ցակատ» թերթի համարները։

Ինստիտուտի գրադարանին է հանձնվել Վ. Ի. Լենինի «Տնտեսագիտական էյուդներ և հոդվածներ» գրքի հազվագյուտ օրինակներից, որը տպագրված է 1898 թ. Ս.—Պետերբուրգում։ Լենինյան աշխատության այդ օրինակը, այլ նյութերի և գրքերի հետ միասին, ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին Ստ. Շահումյանը ավել է Ալավերդու պղնձահանքերի բոլշևիկյան կազմակերպությանը։

Հին սոցիալ-դեմոկրատ (հետագայում մենշևիկ) Գ. Ղարաջյանի (Ս. Տ. Արկոմեդ) անձնական արխիվից, այլ նյութերի հետ միասին, ստացվել է Կոմունիստական պարտիայի տեղական մի շարք կոմիտեների՝ տարբեր ժամանակներում հրատարակած մոտ 500 ռևոլյուցիոն կոչեր ու պրոկլամացիաներ։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության հարցերի մշակման գործում մեծ նշանակություն ունի ռեսպուբլիկայի աշխի ընկնող պատմաբաններին, փիլիսոփաներին, տնտեսագետներին և այլ մասնագետներին ֆիլիալի աշխատանքին ներգրավելը։ Ուժեղացել է ֆիլիալի կապը ԲՈՒՀ-երի մարքսիզմ-լենինիզմի ամբիոնների, Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի և ռեսպուբլիկայի արխիվների հետ։ Ֆիլիալն այդ հիմնարկների հետ միասին կոորդինացնում է ռեսպուբլիկայի պատմաբանների աշխատանքը Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների, Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և սոցիալիստական շինարարության համար մղվող պայքարի պատմության մշակման ընդհանրացման։

ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի գիտահետազոտական աշխատանքների յոթնամյա պլանը կազմված է այն հաշվով, որ նրա կատարումը օգնի պարտիայի պատմության նոր «Ուրվագծերի» ստեղծմանը։ Պլանով նախատեսված է հետազոտել Հայաստանի Կոմպարտիայի պատմության մի շարք պրոբլեմներ, հրատարակել փաստաթղթերի մի քանի ժողովածուներ, այդ թվում՝ Վ. Ի. Լենինը Անդրկովկասի մասին, Վ. Ի. Լենինի երկերի հայերեն հրատարակությունների բիբլիոգրաֆիան, հայերեն լույս տեսած ռևոլյուցիոն պրոկլամացիաներն ու թռուցիկները (1900—1920), Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմակերպական ձևավորումը, հին բոլշևիկների հիշողությունները, ՀԿ(բ)Պ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, ՀԿՊ-ն թվերով, գիտական աշխատությունների ժողովածուներ և այլն։

«Վ. Ի. Լենինը Անդրկովկասի մասին» ժողովածուում տրված են Վ. Ի. Լենինի այն բոլոր աշխատությունները, որոնց մեջ խոսվում է Անդրկովկասի, այդ թվում՝ հայ իրականության, Հայաստանի և հայ ժողովրդի ազատագրական պայքարի մասին, հայ ականավոր մարքսիստների և հասարակական-քաղաքական գործիչների հետ Վ. Ի. Լենինի ունեցած կապերի մասին։

Երկրի զանազան արխիվներում հայտնաբերվել ու հրատարակության են նախապատրաստվել 1900—1920 թթ. հայերեն լույս տեսած մոտ 200 ռևոլյուցիոն, բոլշևիկյան պրոկլամացիաներ ու թռուցիկներ, որոնք պատմում են ՌՍԴԲՊ Կենտկոմի, Թիֆլիսի, Բաքվի, Այնրսանդրոպոլի, Երևանի, Բորչալուի, Կարսի, Շուշիի և այլ կոմիտեների կատարած մասսայական-քաղաքական աշխատանքի, Հայաստանում Սովետական իշխանության հաստատման համար նրանց մղած հերոսական պայքարի մասին։

«Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» ժողովածուն, որը լույս է տեսել ռուսերեն 1957 թ., հարստացված է նոր պատմական-պարտիական արժեքավոր փաստաթղթերով, միաժամանակ այնտեղից հանված են մի շարք ավելորդ և ոչ ճիշտ նյութեր։

Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների և կոմպարտիայի պատմությունը լուսաբանե-

լու գործում զգալի արժեք է ներկայացնում մեմուարային գրականությունը, հին բոլշևիկների՝ ռևոլյուցիայի վետերանների, հիշողությունները։ Փաստական հարուստ նյութ է պարունակում հին բոլշևիկների հիշողությունների առաջին գիրքը, որը հրատարակվել է 1958 թ.։ Հատկապես արժեքավոր են Ա. Ֆ. Մյասնիկյանի, Ա. Ա. Մռավյանի, Ս. Ն. Մարտիկյանի, Գ. Ա. Մելիք-Գրիգորյանի, Ա. Բ. Կարինյանի, Ս. Ս. Սահակյանի (Սիմակ), Գ. Ա. Ակաբրեկյանի և ուրիշների հիշողությունները։

1960 թ. նոյեմբերին նշվելու է Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմպարտիայի կազմակերպական ձևավորման 40-ամյակը։ Այդ կապակցությամբ ֆիլիալում գիտա-հետազոտական աշխատանք է ծավալվել։ ՀԿՊ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի հետ միասին ֆիլիալը հրապարակման համար պատրաստում է «Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմպարտիայի կազմակերպական ձևավորման 40-ամյակը» թեզիսները։ Հայաստանում Սովետական իշխանության հաստատման համար մղված պայքարին է նվիրված հին բոլշևիկների հիշողությունների երկրորդ գիրքը։

Վերջերս Հայկական ֆիլիալը կազմակերպեց այդ գրքի ձեռագրերի լայն քննարկում։ Քննարկմանը մասնակցեցին մոտ 100 մարդ՝ ռևոլյուցիոն շարժման ակտիվ մասնակից հին բոլշևիկներ, պատմաբաններ, ֆիլիալի գիտական խորհրդի անդամներ և ուրիշներ։ Քննարկումը, որը տևեց 3 օր, ցույց տվեց, որ հիշողությունները հարուստ փաստական նյութ են պարունակում Հայաստանում Սովետական իշխանության հաստատման համար Հայաստանի Կոմպարտիայի ղեկավարությամբ բանվորների ու գյուղացիների մղած պայքարի մասին։ Դրա հետ միասին քննարկումը ցույց տվեց, որ մի շարք հեղինակներ չափազանցում են իրենց դերը, իսկ Երբեմն նաև խեղաթյուրում պատմական փաստերը։ Ֆիլիալը մեծ աշխատանք է կատարում հիշողությունների ժողովածուի ձեռագրերը մշակելու և 1960 թվականին հրատարակության նախապատրաստելու ուղղությամբ։ Հրատարակության է պատրաստվում նաև «Հայաստանի պատմա-ռևոլյուցիոն հիշարժան վայրերը» ալբոմը։

Վերջին տարիներս աշխուժացել է Հայաստանում ռևոլյուցիոն շարժումների և սոցիալիստական շինարարության վերաբերյալ մենագրական աշխատությունների պատրաստման աշխատանքը։ Հրատարակված են պատմական գիտությունների թեկնածու Գ. Ա. Գալոյանի «Պայքար Հայաստանում Սովետական իշխանության համար» աշխատությունը (Մոսկվա), պատմական գիտությունների թեկնածու Վ. Ն. Ներկարարյանի «Հայաստանի Կոմունիստական պարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925)», պատմական գիտությունների թեկնածու Բ. Ս. Օհանջանյանի «Հայաստանի Կոմունիստական պարտիան գյուղատնտեսության կոլեկտիվացման համար մղվող պայքարում» և այլ աշխատություններ։

«Ուրվագծերի» ստեղծմանը մասնակցելու հետ միասին, ֆիլիալի գիտաշխատողները յոթնամյա պլանի համաձայն մշակում են հետևյալ թեմաները—Ա. Հ. Բարսեղյան, «Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի կազմակեպական ձևավորումը», Գ. Ա. Գալոյան, «Անդրկովկասի աշխատավորների ինտերնացիոնալ միասնությունը Սովետական իշխանության հաղթանակի և ամրապնդման համար մղված պայքարում (1917—1920)», Բ. Ս. Օհանջանյան, «Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդումը սոցիալիզմի կառուցման և կոմունիզմի ծավալուն շինարարության ժամանակաշրջանում», Վ. Ն. Ներկարարյան, «Հայաստանի Կոմպարտիան երկրի սոցիալիստական ինդուստրացման տարիներին», Ա. Ս. Սարգսյան, «Հայաստանի Կոմպարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման ժամանակաշրջանում հետպատերազմյան տարիներին (1946—1953)» և այլն։ Պարտիայի պատմության սեկտորը (վարիչ Գ. Գալոյան) եռանդուն աշխատանք է ծավալել Հայաստանի Կոմպարտիայի պատմության հարցերի գիտական մշակման ուղղությամբ։

Ֆիլիալում հաճախ են կազմակերպվում գիտական սեսիաներ, երեկոներ։

Հարուստ ու բազմաբովանդակ է Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմությունը։ Այն Հայաստանում Սովետական իշխանության հաստատման, սոցիալիզմի կառուցման, բուրժուական նացիոնալիզմի, հակալենինյան բոլոր հոսանքների ու խմբավորումների դեմ մղած պայքարի պատմությունն է։ Հայաստանի Կոմպարտիան, հանդիսանալով Սովետական Միության Կոմպարտիայի մարտական ջոկատներից մեկը, իսկական հայրենասերների պարտիա է, որը միշտ էլ հավատարիմ է պրոլետարական ինտերնացիոնալիզմին և հետևողականորեն ղեկավարվում է մարքսիզմ-լենինիզմի մեծ ուսմունքով։

ՀԿՊ XIX համագումարը նշեց, որ Հայաստանի Կոմպարտիայի պատմության ճշմարտա-

ցի, գիտական շարադրումը, ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության լուսաբանումը սկզբունքային նշանակություն ունի։

ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի կոլեկտիվի առաջնահերթ խնդիրն է՝ ապահովել մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերի բարձրորակ թարգմանությունն ու հրատարակությունը, ստեղծել Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների և Կոմունիստական պարտիայի պատմությանը նվիրված լիարժեք, տեսական-քաղաքական բարձր գաղափարականությամբ հագեցված «Ուրվագծեր» և գիտական այլ աշխատություններ։

Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԿՊ Կենտկոմին կից Պարտիայի պատմության ինստիտուտի—ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի դիրեկտոր

ԳԵՎՈՐԳ ԱԽՎԵՐԴՅԱՆԻ ԴՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՆԾԱՆՈՒ ԷՋԵՐԻՑ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում պահվում է անցյալ դարի 50-ական թվականների նշանավոր գեմքերից մեկի՝ բժիշկ, բանահավաք ու բանասեր, Սայաթ-Նովայի երկերի առաջին հրատարակիչ Գևորգ Ախվերդյանի թվով ոչ մեծ, սակայն նյութերի բազմազանությամբ ու տեսակներով հարուստ գրական ժառանգությունը. իր ձեռքով գրած ու արտագրած հայ կյանքին ու մշակույթին վերաբերող բազմաթիվ ձեռագիր նմուշներ, քաղվածքներ ու մաթեր, Խորենացուց մինչև իր օրերի պատմիչների մասին տեղեկություններ, գրի առած առակներ ու ասացվածքներ, լեգենդներ ու ժողովրդական ավանդություններ, հարուստ ու տակավին չուսումնասիրված և մասամբ էլ անտիպ աշուղական տաղեր, նամակներ, որոնք այնքան շատ բան են պատմում մեր անցյալի մասին։

Անցյալ դարի 40-ական թվականների սկզբներին ավարտելով Մոսկվայի կայսերական համալսարանի բժշկական ֆակուլտետը, Ախվերդյանը վերադառնում է հայրենիք՝ Թիֆլիս։ Այստեղ նա բժշկի պարտականությունների հետ միաժամանակ սկսում է հետաքրքրվել ու զբաղվել հայ ժողովրդի պատմությամբ. «Կուլի մի քանի տարի հավաքում եմ կենդանի աղբյուրից հանած կենդանի նյութեր ժամանակակից հայ ազգի պատմության համար»,— գրում է նա Սայաթ-Նովայի գրքի առաջաբանում։ Այդ նպատակով նա հավաքել և ուսումնասիրել է հայ և օտարազգի պատմիչներին։ Ավելին, կապ է հաստատել Լազարյան ճեմարանի, Էջմիածնի, Թիֆլիսաբնակ Էնֆիաճյան եղբայրների ձեռագրատների հետ ու օգտվել նրանց նյութերից։ Արխիվում պահվող պատմական արժեք ներկայացնող նյութերից երևում է, որ նա ցանկացել է գրել ինչպես հայ եկեղեցու, այնպես էլ հայ ժողովրդի պատմությունը։ Էնֆիաճյանի ասելով Ախվերդյանը նայել է և մանրազնին ուսումնասիրել Կովկասի փոխարքա Վորոնցովի դիվանատանը եղած՝ հայ ժողովրդին ու եկեղեցուն վերաբերող բոլոր թղթերը։ Ուսումնասիրել է նույն դիվանատանը պահվող լեհական դիվանները՝ հայ դաղթականներից մնացած պատմական հիշատակներ դտնելու հույսով։ Ավելին, ինչպես նամակներից պարզվում է, նա նույնիսկ հին վավերագրեր է գնել։ Այսպիսով, Ախվերդյանի մոտ հավաքվել է պատմական արժեք ներկայացնող վավերականների մի հավաքածու։

Այդ հավաքածուի ուշադրության արժանի փաստաթղթերից է Թուրինի «Իտալի» թերթից թարգմանված Լևոն Լուսինյանի «Շրջաբերականը» ուղղված Նապոլեոն III-ին։ Ըստ այդ «Շրջաբերականի» կեղծ իշխանը իբր 1861 թվականին եղել է Կիլիկիայում, հանրագրեր է կազմել զեյթունցիների ստորագրությամբ։ Սակայն էլ ավելի ուշադրավ է Ախվերդյանի «Թիֆլիսի համբարները» ռուսերեն լեզվով գրած մեծածավալ աշխատությունը, որը խիստ կրճատումներով լույս տեսավ իր մահից 21 տարի հետո, 1882 թ. «Юридическое обозрение» ռուսական թերթում, ապա երկրորդ անգամ 1883 թ. առանձին հրատարակությամբ, դարձյալ մեծ կրճատումներով։

Ախվերդյանին մեծապես հետաքրքրում էր ժողովուրդն իր առօրյա հոգսերով ու սովորություններով, և նրա մեջ արթնանում է սեր ու հետաքրքրություն դեպի ժողովրդական բանահյուսություն։ Օտարազգիների նախատինքը այն մասին, թե իբր հայերը զուրկ են բանաստեղծական զգացմունքից, որովհետև չունեն դրի առած իրենց ազգային երգերը, որոնք վկաներ պետք է լինեին հայի բանաստեղծական ոգուն, վիրավորել էին Ախվերդյանի ազգային արժանապատվությունը։ «Մինչև օրս էլ չեմ տեսել մեկ ազգ, որն որ չունենա խաղ ու երգեր. թե ուրախ և թե տխուր վիճակում՝ ազգն կարող է